Սերտիֆիկատի գործողության կասեցման և դադարեցման ընթացակարգը

Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցվում է այն դեպքում, երբ հայտնաբերված անհամապատասխանությունները կրում են այնպիսի բնույթ, որ սերտիֆիկատ տնօրինող կազմակերպությունը սերտիֆիկացման մարմնի հետ համաձայնեցված ուղղիչ միջոցառումների միջոցով ի վիճակի է մեկամսյա ժամկետում վերացնել բացահայտված անհամապատասխանությունների պատճառները և հավաստել արտադրանքի համապատասխանությունը սահմանված պահանջներին:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կարող է կասեցվել նաև սերտիֆիկացման մարմնի և սերտիֆիկատը տնօրինող կազմակերպության միջև փոխադարձ համաձայնությամբ՝ տվյալ արտադրանքի արտադրության/ներկրման/իրացման ժամանակավոր դադարեցման կամ այլ պատճառներով:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կարող է դադարեցվել, եթե արտադրանքը չի համապատասխանում անվտանգության պահանջներին և եթե սերտիֆիկատի գործողության ընթացքում սերտիֆիկատը տնօրինող կազմակերպությունը ուղղիչ միջոցառումներ չի ձեռնարկել կամ եթե ուղղիչ միջոցառումներով հնարավոր չէ վերացնել անհամապատասխանությունը:

Սերտիֆիկատի գործողությունը դադարեցվում է նաև այն դեպքում, եթե արտադրանքը հանված է արտադրությունից:

Սերտիֆիկատի գործողության կասեցումը կամ դադարեցումը ուժի մեջ է մտնում այդ մասին գրանցամատյանում գրանցում կատարելու պահից:

Սերտիֆիկատի գործողության դադարեցման հետ միաժամանակ՝ դադարեցվում է նաև համապատասխանության նշանի կիրառումը: